19970

891.99
Ա-62

ԱՆՏՈՒՆԻ

# ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ

507/4

11

«ՊՐՈԼԵՏԱՐ»-Ի
ԳՐԱԴԱՐԱՆ

Арм.
2-3099₂
891.99
Ա-62
20 APR 2006
9 NOV 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

№ 11

„ՊՐՈԼԵՏԱՐ"-Ի
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՆՏՈՒՆԻ

# ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ

Гос. публичная б-ка
Инв. № 9732

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՊՐՈԼԵՏԱՐ» ԹԵՐԹԻ
ԹԻՖԼԻՍ
1936 թ.

13.02.2013

19970

Պատ. խմբագիր՝ Կ. Ազրոյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Դովլաթյան

ՀՍՍՀ Պետական գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

4009-87

Ա. Ֆ. Մյասնիկյանի անվ. տպ. հր. «Զարյա Վոստոկայի»

Պատվեր 20 Գլավլիտ 4447 Քանակ 2000

Արևելյան Արփա-չայը Տաշալթի կոչված գյուղակի մոտ դուրս գալով իր թեերը յերկու կողմից սղմած ժայռոտ ափերից, լայն սահանքով տարածվում և թավշեկանաչ այն պերճ հովտում, վորտեղ վերջերս ծաղկում են կոլխոզի բամբակի արտերը՝ սպիտակ գանգուրներով: Սրանց ծարավը լիուլի հագեցնելուց հետո նա ինքնաբավական վազում է դեպի արևմուտք ու դիպչելով Մոզ քաղաքի ավերակներն իր գլխին պահած քարակոփ սարավանդին, ընկրկում է յետ, բերնին դայլուլթի փրփուր: Ապա թեքվելով հարավ, նա չեչտակի նետվում է առաջ և մեջքը տալով իր ձախ ափը պատնեշող ժայռին, փռվում, կազմում է փոքրիկ լճակ՝ «Կապույտ-գյոլ», վողորկ ու ջինջ, ինչպես լեռնային լուրթ յերկինք:

Այդ հոսուն լճակի դիմաց, միահասակ ուռիների մի պուրակ, կատարները միացրած իրար, մշտականաչ հովանի յե շինում այն հսկայական կուրգանի վրա, վորի տակից ժայթքում է ավանդական Կաթնաղբյուրը:

Հունիսյան շոգ օր է: Ոդը տաք, անշարժ: Կաթնաղբյուրի շուրջը բոլորած՝ կոլխոզի յերեք բրիգադները, յերեսունից ավելի կին ու տղամարդ, լռում են ազդու դիմագծերով, արտահայտիչ խոսուն աչքերով

ու ներս ընկած կրծքով մի ծերունու, վոր թերթ է կարդում նրանց համար, նստած թամբաձև մի քարի:

Դա գյուղում և Դար-գավառում ամենքից հարգված Ոհան ապերն է, վոր հայտնի յե նաև Փիլոս-Ոհան անունով:



Փիլոսը փիլիսոփա բառի աղավաղված ձևն եր, վորով գյուղացիները կանչում եյին Ոհանին, նկատի ունենալով նրա՝ իրենցից ավելի զարգացած միտքը, նրա խելացի դատողությունները, նրա գրավարժությունը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:

Գառնարած, հետո չոբան Ոհանը, սրտում գիտակցական տասներեք տարվա տխուր հիշողություններ, գյուղից հեռացել, ընկել եր Թիֆլիս, ապա անցել եր Բագու և Խարկով: Այնտեղից ուսերին բարձած բանվորության յերկու տասնամյակ, համաշխարհային պատերազմից առաջ վերադարձել եր գյուղ, խմորված հեղափոխական գաղափարներով, յերեսին մաշուկ բարակացավի դրոշմ:

Դաշնակցության որոք Փիլոս-Ոհանը հայտարարեց իրեն խմբապետության ակտիվ հակառակորդ, յենթարկվեց հալածանքի, կալանավորվեց, բանտից փախավ ու դարձավ հայրենի յերկրի խորհրդայնացման անձնվեր մարտիկներից մեկը:

Կոլխոզային շարժումն սկսվելիս՝ Ոհանը Դարգավառում կազմակերպեց առաջին կոլխոզը և ընտրվեց նրա վարչության անփոփոխ նախագահ: Այդ ժամանակ հենց, - հայտնի չե, թե ինչպե՞ս, ո՞ւմ նախաձեռնությամբ, Փիլոսը գործածությունից հանվեց և փոխարինվեց ապեր մեղմական ու հարգալից մակդիրով: Վարելով այդ պաշտոնը, Ոհան ապերը հասնում եր ամենուր, վորտեղ նկատում եր ճեղքվածք կամ սպառնացող դրություն: Այսօր ել կոլխոզնիկների հետ նա յեկել եր բամբակի քաղհանի, վորը բավական ուշացել եր: Յեվ այժմ, ճաշին հաջորդող հանգստի ժամին, նրանց զբաղեցնում եր ընթերցումով: Հեռագիրներն ու քաղաքական նորությունները հաղորդելուց, մեկնաբանելուց հետո՝ Ոհան ապերը բացեց թերթի յերրորդ եջը, մի րոպե լուռ աչքի անցուցեց այն, ապա կարդաց.

# ԲԱՄԲԱԿԻ ՔԱՂՀԱՆԸ ԺԱՄԿԵՏԻՆ ԿԱՏԱՐԵԼԸ ՊԱՏՎԻ ԽՆԴԻՐ Է

## Սարդարաբադն առաջին տեղում

*«Լավ խնամքի շնորհիվ, այս տարի յեգիպտական բամբակը կանդնել է հնդեղեղնի պես ու խոստանում է առատ բերք: Կոլխոզնիկները յերկրորդ քաղհանը կատարել են 92 տոկոսով, մենատնտեսները՝ 75»:*

*Հետո կարդաց* «Վաղպատը յետ է մնում» *փոքրիկ թղթակցությունը և սրա պես մի յերկու ոպերատիվ հաղորդագրություն, ապա հայտարարեց.*

*— Բարեկամներ, հանդստի ժամը կնքվեց, հիմա դեպի գործ:*

*Ծեր Ոհան ապերը ծալեց թերթը:*

*— Առաջարկ ունեմ, — ասաց խառը բրիգադի պետ՝ Կարոն.— վոր մենք էլ վաղպատցիների շարքը չընկնենք, յեկեք՝ այսոր վերջացնենք քառանկյունի մեծ արտը: Համաձա՞յն եք:*

*— Պաչեմ անհամաձայնի քեռակինը, — գոչեց գնչույի դեմքով հարվածային Մարտինը, վորին սեվության համար կանչում եյին «բոշի տղա»:*

*— Քեռակինն ազիզ է. վո՛չ վոք թող չի տա, վոր բոշի տղան անպատիժ պաչի նրան,—ասաց Ալոյենց Սաքոն, գյուղի հայտնի ձկնորսը և սրախոս մարդը:*

*Կոլխոզնիկները բարձր ծիծաղով հավանություն տվին Սաքոյի կատակին և թոխերն ուսած, արագ գնացին դեպի քառանկյունի արտը: Այստեղ նրանք շարվեցին մարգի յերկայնքով, ձախ թևում տղամարդկանց բրիգադը, մեջտեղում՝ կանանց, աջ թևում՝ խառը բրիգադը: Ամենքը մի րոպե աչքով ծանր ու թեթև եյին անում կանաչ սփռոցի պես փռված այն տարածությունը, վորի վրա շարքացան բամբակի տունկերը կադնել եյին, զորահանդեսի շարված զորքի ուղիղ տողանների նման:*

*— Բարեկամներ, — խոսեց Ոհան ապերը,—յուրաքանչյուր բրիգադ միաժամանակ սկսում է յերկու լաս: Փորձը ցույց է տվել, վոր քաղհանած մոլախոտը մնալով լասերի մեջ, նրա վորոշ մասը նորից բռնում է ջրելուց հետո: Վորպեսզի դա չլինի, պետք է մոլախոտերն անմիջապես դուրս տանել արտից ու կիտել ճանապարհի ափին:*



*— Հե՛տ ասեղուդ, Ոհան ապեր,—ձայնեցին բրիգադիրները և նշանակելով մոլախոտը հավաքողներ, գործի անցան:*

*— Ցա՛, տիրացու Գլդոյի զորավոր ավետարան,— կատակով բացականչեց Մելքոնը, բարձրացնելով թոխը:*

*— Ով յետ մնա յերեսը սև,— հայտարարեց օրինակելի հարվածային Արսենը, չոր ու բարակ մի յերիտասարդ, վորին իր լռախոսության համար կանչում եյին Ուրբաթախոս:*

*— Եդ պայմանի հե՛չ. իմ յերեսը հենց են գըլխեն սև է,— վրա բերեց բոշի տղա Մարտինը:*

*— Ով յետ մնա, տուն չի գնա,— ասաց Կարոն:*

*— Դարդ անի նա, ով կնոջը թողել է տանը: Սարերի ալ ու ալվան լալա՝ իմ Նազլու խաթունը կողքիս, կուզեք՝ սաղ ամառ տուն չերթամ, — զվարճախոսեց Սաքոն, նայելով իր կարճ ու գեր, կարմրաթուշ կընոջը, վորին սիրում էր պարծանքով ու կրակոտ ըղձացումով:*

*Նազլուն, համեստության տուրք տված լինելու համար, հանդիմանական մի խոսք ասաց մարդուն, բայց մնաց անուշադիր:*

*— Տղերք, իմ գիտենալով, մեր մրցումից կանայք դուրս են մնում, եդպես չէ՞, — հարցրեց Մելքոնը խորամանկ ժպիտով:*

*— Ի՞նչ ես հաշվից մեզ դուրս քցում, թե՞ կըրակին յեղ ես լցում, — բողոքեց հարվածային Մանանը, վոր հայտնի յեր հանդգաբանելու իր վարպետությամբ:*

— Գործը ցույց կտա, Մանան քույրիկ...

— Ջան պահողին թուք ու մուր, էլ չվիճենք, յեղբայր, զուր...

Ու չարքերը, ձիգ տված լարի պես ուղիղ, առաջ շարժվեցին, իրենց յետևում թողնելով փոշու բարակ մուժ: Վոչ վոք այլևս չեր խոսում, վո՛չ էլ աջ ու ձախ նայում: Բոլոր թորխերը միաժամանակ բարձրանում և համաչափորեն իջնում եյին, համակելով ամենքին միասնության գիտակցությամբ: Տարիների փորձից յուրաքանչյուր գիտեր, վոր մկանների լարումը կամ չափազանց թափով հարվածը կլանում է ավելի ուժ, բացասաբար անդրադառնալով աշխատանքի վորակի վրա: Ուստի, ձեռքերը գործում եյին համարյա ինքնաբերաբար, ազատ ու թեթև, իրենց բաժին ընկած հողաշերտի ծիրում, վորին հառած եյին մի զույգ ուշադիր աչքեր:

Համեմատաբար դժվար եր լասերի ափով գընացող բրիգադների բանը. Նրանք պետք է միաժամանակ շտկեյին ակոսի խախտված թումբերը ու վոռոգման համար բանդեր կապեյին պահանջված տեղերում, յետ չմնալով իրենց հարևաններից: Իսկ վորովհետև խառը բրիգադում մարդկանց թիվը մեկով պակաս եր մյուսներից, այդ աշխատանքն այնտեղ իր վրա վերցրեց Ոհան ապերը, չանսալով բրիգադիր Կարոյի բողոքին:

Կեսորվա տոթը կոտրվել եր: Գետի հոսանքով յկած զովը, հանդիստ բերող հաճույքով, ասես՝ արբեցումե չդարշում, շոյում եր կոլխոզնիկների քրտնաթոր ճակատը, ներշնչելով նրանց անմար յեռանդ:

Քառասուն րոպեյից նրանք դուրս յեկան արտի հակադիր ծայրը և, ժամանակ չկորցնելու համար, ուզում եյին այնտեղից սկսել նոր չարքը, բայց Ոհան ապերն արգելեց, ասելով.

— Նախ, յերեք րոպե հանգիստ: Յերկրորդ, դուք գիտեք, վոր ջուրը գալիս է այդ կողմից, դիպ-



չելով թորխած հողի մեջքին: Մինչդեռ, արտը ջուր գիտի խմի իր կրծքով, վոր լավ կշտանա:

Բրիգադների մարդիկ լուռ շարվեցին իրենց պետերի յետևից և ակոսների միջով յեկան, հասան առաջվա մարզին ու, փոքր դադարից հետո, աշխատանքը բորբոքվեց նույն կարգով:

Հովտի վրա ամբողջ որը պեծին տվող շողից գետը, կարծես մի տեսակ համրացած, այժմ փորձում եր խոսել՝ քարերին զարնվող իր ալիքների բերանով: Նրանց ծփանքի աշխույժ զնգոցը պարզ հասնում եր Մանանի ականջին, գրգռելով նրա լռությունը և հուշելով յերգելու մասին: Նա մտքի մեջ տնտնաց մի յեղանակ, թորխի հարվածներին համաչափ, ապա մեկեն սկսեց յերգել իր կրծքային ախորժ ձայնով.

Հավքերի հետ ծեգին զարթնում,
Աշխատում եմ կոլխոզ-արտում.
Վոտիս դրած տեղը շաղ է,
Աշխատանքը խինդ ու խաղ է:
Դե՛ շուտ, Մարո,
Արուս, Դարո,
Քաղհան անենք, անուշ զով է,
Մեզ հետ մրցող տղան ո՞վ է:

Մրցահրավերի այդ համարձակ կանչը վորքան անսպասելի, այնքան բացահայտ եր: Տղամարդկանց բրիգադն այն լսեց ժպտերես, արագացնելով տեմպերը: Կանայք զգացին այդ և առանց իրար բան ասելու, բարձրացրին աշխատանքի թափը: Թոխանավորների շարքն առաջ եր գնում նույն ուղիղ գծով: Անցան սպասումի րոպեներ, ժամերի տևողությամբ, բայց պատասխան դեռ չկար, վոր հաղթանակի թև եր տալիս կանանց, ավելացնելով նրանց յեռանդը:

— Արսեն, քո բախտից ուրբաթ է այսոր, ուրբաթախոսների լեզվի բլբլոցի տոնը. մի բան ասա, պա-

տասխան տուր Մանանին,— ասաց Սաքոն, աչքի տակից նայելով նրան:

— Ով բանաստեղծ, յես հարվածային: Իմը սև աշխատանքն է, — պատասխանեց Արսենը լրջորեն:

Հանկարծ, ամենաշատ թևից, վորպես հեռավոր խուլ արձագանք, լսվեց Ոհան ապոր թավ ձայնը.

Կոլխոզ – արտը շարքացած է,
Խոր ակոսը սև կածած է.
Ցերակ է դա արտի համար,
Տեղ-տեղ կապենք բանդեր հարմար:
Աղջիկ համով,
Սև-սաթ ծամով,
Ցերդվում եմ յես՝ աչքըդ վկա,
Մրցման կանչից փախչող չկա:

— Ջա՛ն, ջա՛ն ապեր, ձայնդ անսպառ...

— Նար մինչև եւ կմնա նար...*)—բացականչեցին տղամարդիկ ձախից, և աշխատանքը յեռաց նոր թափով:

Մայրամուտին քառանկյունի արտը, արդեն քաղհան արված, ժպտում եր թարմերես՝ հրաշեկ սկուտեղի պես փայլուն արևի շեղ ցոլքերի տակ: Ճաշից հետո կատարված գործը սովորական պայմաններում այդքան մարդիկ կարող եյին կատարել մի ամբողջ որում միայն: Կոլեկտիվի անդամները չափազանց գոհ եյին, ակնհայտնապես տեսնելով սոցմրցության տված արդյունքը: Գոհ եր մանավանդ Ոհան ապերը, վորն ասաց նրանց.

— Բարեկամներ, սրտանց շնորհակալություն ձեզ ձեր բացակա ընկերների անունից: Այժմ շարաչ, հետո էլ մի առաջարկ. գյուղ գնալ-գալը մեզնից խլում է և՛ ժամանակ, և՛ յեռանդ՝ ի վնաս մեր հանգստի ու քնի:

*) Նար կոչվում է քարավանն իր յետևից տանող շքեղազարդ ուղտը:



Հուսամ, չեք մոռացել «Պատվի խնդիրը», վորի մասին կարդացինք թերթում: Եսօր գիշերում ենք հանդում, կաթնաղբյուրի մոտ: Սաքոն անբաժան է իր ուրականից՝ թոռից: Խնդրենք նրան, ձուկ բռնի մեզ համար, միասին ջան ու ջանիկ ասելով ընթրենք, վորից հետո ձեր Ոհան ապերը խոստանում է պատմել՝ ձեզ լավ հայտնի կաթնաղբյուրի մասին ձեզ անհայտ մի սրտառուչ ավանդություն:

Կոլխոզնիկները հայտնեցին իրենց համաձայնությունը բուռն ծափերով և թևերն իրար զնդացնելով:

Ոհան ապոր կարգադրությամբ, յերկու հոգի գնացին այգիները՝ կանաչի ու կարտոֆիլ բերելու: Յուրաքանչյուր բրիգադից մի-մի մարդ ուղարկվեց գյուղ՝ վաղվա համար հաց ու մթերքի: Կանայք ցրվեցին՝ խոփի և չոր փայտ հավաքելու: Մի քանի յերիտասարդներ վազեցին բերելու քաղհանած մոլախոտը, վոր նրանից ներքնակ պատրաստեն: Սաքոն ուռցեց ուրականի արճիճ-քարերն ու «զանձարանը», կապեց կարված «զանջղները»*) և հայտարարեց.

— Ամեն բրիգադի համար քցելու յեմ տաս թոռ: Ում բախտը փուչ դուրս գա, նա կուտի վո՛չ թե ձուկ, այլ դաշտի մուկ.! Լա՞վ սազացրի, բանաստեղծ Մանան:

— Թող քցածդ վոր կուլը լինի, կրակ դառնա, բան չի չինի, — պատասխանեց Մանանը, առաջացնելով ընդհանուր քրքիջ:

— Քո լեզվի հախից կգա միայն սև գրողը,—ա-

*) Այդպես են կոչվում սովորաբար կապույտ կամ կարմիր այն թելերը, վորոնցով ուրականի բարակ ափը կապում են, իրարից քառորդ արշին ընդմիջոցով, նրա անցքերի հետ, և ստացվում է զանձարանը, ուր ընկնում, գերվում է ձուկը՝ իր փախուստի ճանապարհին:

ասաց Սաքոն, ապա ուռկանն ուսեց, սլացավ գետն ի վար, որ կոլխոզի ջրաղացի ակունքներից բարձրանա դեպի կապույտ լճակը:

Նրան հետևեցին Արուսն ու Մարտինը, դույլը ձեռքին: Տեսնելով Արուսին, Սաքոն կանգնեց, գլուխն օրորեց և ասաց.

— Ձեռա՛վ, եդ չեղավ. Թռչուն նստատեղը սովորաբար բաց է լինում, ձուկ հավաքողի աչքն էլ նրան է նայում... Քո կարծի՞քն եդ կինոյի մասին, Ոհան ապեր:

— Թո՛ղ ոյինբազությունը, Սաքո, յե՛ս էլ եմ գալիս ձեզ հետ, — ասաց Ոհան ապերը ուրախ ծիծաղով:

— Քո գալով ներկայացումը չի փոխվում, ավելանում է միայն իմ թամաշաչիների թիվը,—ձգեց Սաքոն ու առաջ վազեց:

Այս հայտարարությունից հետո Արուսն ուզում էր չգնալ, բայց Մարտինը քաշեց նրա թևից, մխիթարեցնելով, որ Սաքոն հանաք է անում:

Արևի թիթառուն ոսկե գունդը հորիզոնից հեռու չեր հինգ-վեց մետրով: Նրա հուրհրան շողերը փռել էյին գետի յերեսին նարինջ շղարշ, որից հրապուրված, ձկներից խիզախները թռչում էյին վեր, մի հեղ շնչում ցամաքի տաք օդը, ապա շրխկալով նորից ընկնում ջուրը: Դա աջող որսի հայտարար էր:

Սաքոն ուռկանի մաղե թոկի ծայրը կապեց ուսին, փամփուշտակալի պես, աչքը տնկած կրիայի պատյանի ձև ունեցող քարին, որի տակ ջուրը պետք է լիներ բավական խոր ու ձկների հանգրվան: Ապա արճճաքարերից մեկն առավ բերանը, ձախ ձեռքում փնջած ուռկանը բաժանեց յերկուսի, մի մասը ձգեց աջ դաստակին և, թոռն ամբողջ լայնությամբ բացելով օդի մեջ, թափով նետեց այն: Հետո, իր որսի վրա հարձակվող բազեյի շեշտակի արագությամբ, թոկի գիծն իրեն ուղեցույց, նա վազեց, մտավ ուռ-



կանի մեջ ու կռացած, յերկու ձեռքով պրպտում էր գանձարանը: Գետափին ասպատղները հետևում էյին նրան լարված հետաքրքրությամբ, շնչերնին պահած: Վայրկյանները թվում էյին րոպեներ:

Մնալով նույն դիրքում, Սաքոն համառ պայքարից հետո, վերջապես, ջրից հանեց աջ ձեռքը, բռթամատով սղմած մի խոշոր ձկան կոկորդ: Մարտինը ընազդաբար մոտ վազեց ճչալով, բայց Սաքոն, փոխանակ ձուկը նետելու ափ, բերնով բռնեց նրա գլխից ու շարունակեց իր որոնումները: Մարտինը և Արուսը նայեցին իրար, հիասթափված: Իսկ Ոհան ապերը ժպտում էր, համոզված, որ բերքն առատ է: Հանկարծ Արուսն սկսեց բարձր ծիծաղել, տեսնելով, թե ինչպե՛ս թփրտում է ձուկը և իր յերկար մարմնի ծանրությամբ ծեծում Սաքոյի կուրծքը, նրա ատամներից ազատվելու դուր ջանքերով: Յերկրորդ անգամ Սաքոն հանեց ձեռքը, միջին առաջին ձկան ընկերը: Նա ուղղվեց ու թևին տալով հորիզոնական դիրք, ափ նետեց քառորդ մետրանոց կապուտակները: Արուսը կռացավ, որ վերցնի ավազին ընկած ձուկը: Սա ցատկեց ու պոչով հարվածեց նրա կզակը: Շփոթված աղջիկը մի քայլ յետ քաշվեց, բայց հետո սրտապնդված, վոտը դրեց ձկան կողերին:

— Մի՛, Արուս, կճխլես, — համարյա բղավեց Ոհան ապերը ներողամիտ ժպիտով:

Իրոք որ, բերքն առատ էր: Սաքոն իրար յետևից ափ շպրտեց եյի յոթ ձուկ: Ուռկանը քաշելիս՝ նա նկատեց գանձարանի վերին մասում մի մեծ «յերկարաքիթ» (ուղունբուռուն) և վրա պրծավ նրան: Բայց սայթաքեց ու բերնի վրա ընկավ ջրի մեջ: Գետափից լսվեց ցնցուն քրքիջ: Ծիծաղը վիրավորական չեր թվա Սաքոյին, յեթե յերկարաքիթը չփախչեր, պատառելով ուռկանը: Նա հայհոյեց իր ձախողության վրա բարեպատորեն ծիծաղողներին ու քաշեց, բարձրացրեց թոռը: Գանձարանում կային բավական

մանր ձկներ։ Սաքոն նրանց խնամքով թափեց ջուրը, ասելով.

— Մեծացեք, չաղացեք, պիծիկներ, հետո կբռնեմ ձեզ, — ու շարունակեց մորսը, ուշադրություն չդարձնելով կրծքին կպած շապկի վրայից թափվող ջրի կայլակներին։

Մարտինը ձկների կոկորդը կտրում, փորոտիքը թափում և դանակով քերում էր թեփը, իսկ Արուսը և Ոհան ապերը լվանում, ձգում էին դույլի մեջ։

Լեռների կատարներին դեռ թրթռում էին վերջալույսի փռած վարդագույն շարֆերը, երբ Սաքոն ավարտեց իր մորսը, ուսկանը քամեց, փռեց, ապա օգտվելով մասրենու թփից, շապիկն ու վարտաշորը հանեց, լավ մզեց ու հագավ։ Դույլն ափե-ափ լիքն էր. բացի դրանից, բավական քանակությամբ ձուկ հագցրած էր յեղզունի փայտի վրա, որ տանում էր Արուսը։

Կաթնաղբյուրի մոտ վառվում էր յերկու խարույկ։ Մեկի վրա կաթսայի մեջ քթքթալեն յեփվում էր ջուրը՝ ձկան համար, իսկ մյուսի վրա խորովում էին կանաչ պղպեղ և չուտհասուկ կարտոֆիլ։ Մի քանի րոպեյից թեժ կրակին դրած կապուտակների հոտը լցրեց ձորը, գրգռելով անգամ կուշտ մարդու ախորժակը։ Ուռիների յետևում, պայտաձև գծով, պատրաստ էին խոտե ներքնակները։ Պայտի բաց մասը փակում էր հաստաբուն մի ծառ, որի տակ իրար վրա դարսած ավլույտի խուրձերից մահիճ էին շինել Ոհան ապոր համար։

Համեղ ընթրիքից հետո կոլխոզնիկները զույգ-զույգ, յեռյակ առ յեռյակ տեղավորվեցին իրար կողքի և կիսաձայն զրուցում ու կատակում էին։

Ոհան ապերը, վո՛չ առանց ճռչվելու զգացումի, բարձրացավ իր տեղը, վերարկուն քաշեց ծնկներին ու վառեց ծխախոտը, հարմար թիկնած ծառին։



Գետը վշվշում էր իր արծաթահնչուն մոնոտոն յերգը, բյուր-բյուրաչյա յերկինքն ակնապիշ ունկընդրում էր նրան։

— Ոհան ապեր, ծխելդ անուշ, բայց կասես՝ դա վերջ չունի։ Իմացիր, որ մենք չենք մոռացել քո խոստումը, — խոսեց Մելքոնը, և տիրեց խորին լըռություն։

Համատարած խավարի միջից, վորպես լայնաբերան ռուպորից, հնչեց Ոհան ապոր ախորժալուր թավ ձայնը.

— Կաթնաղբյուրի մասին ավանդությունը գալիս է դարերի խորքից և անցնելով սերնդից-սերունդ, հասել է մինչև մեր օրը։ Դա ինձ պատմել է իմ դառնարած օրերին, ամառնային այպլխի մի գիշեր, մեր ծաղկաշատ յայլաների անուշ բուրմունքի մեջ, նայրանդ Անտոնը, վորին դուք չեք տեսել։ Նա մեռավ, յերբ յես տասնութ տարեկան պատանի էի և թվում էր ինձ, թե կարող եմ թև առնել, թռչել արծիվների հետ...

Ոհան ապերը հառաչեց սրտի խորքից, յերևի, ափսոսալով իր յերիտասարդությունը, կամ դուցե՝ խորասուզվելով անցյալի մութ ծալքերի ներսը, մի վայրկյան լռեց, ապա սկսեց այսպես.

«Դարեր առաջ մեր այսօրվա ավերակ այս Մոգ քաղաքը հայտնի յե յեղել իր քարաշեն գեղեցիկ տըներով, սալահատակած փողոցներով և ամրակուռ հաստապարիսպներով։ Ուղտերի շարեշար քարավանները, վոր գալիս էին Նախիջևանի վրայով Պարսկաստանից, լցնում էին նրա շուկան վո՛չ միայն արևելքի անուշաբույր խնկերով, համեղ մրգերով, այլև մետաքս – կերպասով, գունագեղ գորգ ու ատլասով։

«Բայց Մոգն ավելի հայտնի յեր իր Սալար իշխանով, վորի ահից ուրուրն իր թևով, օձն իր պորտով, ավազակն ալան-թալանի իր ծարավով սիրտ

չէյին անում մոտենալու նրա տիրապետության սահմաններին, վորտեղ Սալարի կամքը թունավոր հատու թուր էր, ցանկությունը՝ պարտադիր օրենք:

«Հաստ ու անտաշ էր Սալարը, ինչպես բրոնզե կոպիտ արձան. գլուխը մեծ, ճակատը նեղ, վիզը կարճ: Տափակ քթի հիմքին իրար հետ միացած թավ հոնքերը, սամոթեյլերի նման, ուղիղ գծով ձգվում էյին դեպի մազոտ քունքերը, մշտական ստվեր գցելով իրենց տակ վառվող մի զույգ սև աչքերի վրա: Գանգուր պուրակներով լայն միրուքը բոլորաձև պատում էր հաղթ կուրծքը, վորի բուսականության մեջ կարող էր խճճվել անգամ ամրաթև բուռը:

«Աշնանային լուսաբինդ մի օր, անուշ մայրամուտի ժամին, Սալարը նստած իր վոսկեթույր ձին, թևին թառած սրատես մի բազե, վերադառնում էր կաքավի վորսից, շրջապատված իր կամակատար թիկնապահներով: Այդ րոպեյին աջ կողմի բլուրներից իջնում էյին մի խումբ աղջիկներ, մեջքերին ծաղիկ—ամելի կապոցներ:

«Ընկերուհիների գլուխն անցած, հոտի առջևից սիգաճեմ քայլող քարայծի նման, գալիս էր մանկահաս մի կույս, հասակը դալար նոճի, դեմքը գարնան վառ արշալույս, կապույտ աչերից շողած հայացքը մաղնիսի պես ինքնաձիգ: Մի զույգ վոսկեգույն ծամեր, հանգույց տված բարձր կրծքին, շահմար օձերի նման, կախվել էյին մինչև ծնկները:

«Սալարը տեսավ նրան, քաշեց իր նժույգի սանձը և մի րոպե չեչտակի դիտելով չարխաղ գեղեցկուհուն, վորն ակամա կանգ առավ, հարցրեց.

— «Անունդ ի՞նչ է, հուր-աղջիկ:

— «Շողիկ... — կամացուկ թոթովեց կույսը, բոցավառվելով:

— «Այս ջեղնիկը հենց այս գիշեր պիտի լինի իմ ննջարանում,— ձգեց Սալարն իր մարդկանց և խթանեց ձին:



«Ու Շողիկը դարձավ իշխան Սալարի հարճը:

— Վա՜յ անօրեն աշխարհ, — լսվեց մի բազականչություն:

— Անողորմ զորանների աշխարհ, — արձագանքեց մյուսը:

«Յոթ ամիս Շողիկն ապրեց իշխանական շքեղ

պալատում, ինչպես թռչնիկը վոսկե վանդակում, ու վո՛չ մի անգամ ժպիտ չերևաց նրա բարակ շուրթերին, թոռոմած թշերին: Նա այնքան լացեց, վոր նրա արցունքներով կարելի յեր ջրել Սալարի պալատի ծաղկոցը:

Ցոլիկը սիրում էր գույնզգույն հուլունքներ շինող՝ իրենց դրացի Ալղարի որդուն, յաչին-պատանի Հարեթին, վորի կարոտից հալվում էր նրա վշտաբեկ սիրտը, վառված մոմի պես: Ցոլիկն ատում էր Սալար իշխանին, վորի մաղապատ գրկում նա իրեն զգում էր այնպես, ինչպես թեր կոտրած աղավնին փշերի միջին:

«Մի գիշեր, յերբ Սալարը մեջքի վրա պառկած մետաքսե անկողնում, մկանուտ ձեռքն ածնիվեր դրած Ցոլիկի կրծքին, խռմփում էր խորունկ քնի մեջ, Ցոլիկն զգույշ դուրս սողաց նրա թաթի տակից, վերցրեց պատից կախած տոհմական դաշույնը Սալարի ու խրեց նրա սիրտը մինչ դաստակը և փախավ, վառները դողահար:

— Ջա՛ն հարվածիդ, ջեյրան աղջիկ, — գոչեց Մարտինը, Ցոլիկի տեղ յերևակայելով իր կողքին թիկնած շիմշատ Արուսին, վոր լրջորեն վրդովվել էր նրա սրտի հանգիստը:

«Պալատի դարբասի մոտ Ցոլիկին բռնեցին պահապանները, յերբ նա ուզում էր դուրս գալ յերկաթապատ դռնակից:

— Ախտո՛ս... — հառաչեց մի ձայն:

«Հետևյալ օրը հավաքվեցին Մող քաղաքի ավագանին ու դատավորները և նրան դատապարտեցին մահվան: Բայց դատի ժամանակ նկատել էին, վոր Ցոլիկը հղի յե, ուստի, վորոշեցին դատավճիռն իրագործել ծննդաբերությունից հետո: Ջմեռվա ցուրտ, մշուշապատ մի առավոտ Ցոլիկը ծնեց վոսկեհեր մի տղա, վորին կերակրեց միայն յերեք օր: Չորրորդ օրը նրան դուրս բերին քաղաքից և այստեղ, գետի ափին, փորեցին մի հոր՝ յոթ կանգուն խորությամբ, յերկու կանգուն լայնությամբ, ու Ցոլիկին ողջ-ողջ կանգնեցրին նրա մեջ, ձեռքերը կապած մեջքին: Իշխանապան կնոջ տառապանքները յերկարացնելու, ցավերն ուժեղացնելու համար, հող լցրին



նրա շուրջը՝ մինչև կուրծքը, գլխի վրայից հորը ծածկեցին սալաքարով, կողքից ցցած յեղեգնյա մի խողովակ, վոր պիտի օդ մատակարարեր թաղվածին, ապա վրան բարձրացրին մեծ կուրգան:

«Ցոլիկի ծծերը կաթով լցվել, անտանելի ցավ եյին պատճառում նրան: Նա լալիս էր և աղոթում, վոր յերկինքը վերջ տա իր տանջանքներին: Կիսաթմրած գրությամբ, հանկարծ Ցոլիկի ականջին հասավ մի ձայն, վոր ասում էր նրան. «Նստելու փորձ արա, ծծերիդ պտուկները կրացվեն; ցավերդ կանցնեն»... Նա բնազդաբար արավ այդպիսի շարժում, ծծերը ողողվեցին հողի շերտին, և առատորեն հոսեց կաթը...

«Ջմեռն անցավ: Գարնան ջերմ շնչից հալվեց ձյան սպիտակ սավանը, վորի տեղ յերևաց առաջին անեղանաձև կանաչը: Մողի աղջիկները, Ցոլիկի ընկերուհիներն իջան գետափ՝ ձնծաղիկ փնջելու: Նրանք զարմանքից ապշեցին, յերբ տեսան, վոր Ցոլիկի կուրգանի տակից դուրս է գալիս գուլալ մի աղբյուր, կաթի պես համեղ, սառցի պես պաղ, շուրջը գալար ուռիներ, պայթած պտուկներով:

«Կաթնաղբյո՛ւր Ցոլիկի կրծքից, — ասաց աղջիկներից մեկը, ու նրա աչքերում շողացին այրող ցավի արցունքներ»:

«Կաթնաղբյո՛ւր, Կաթնաղբյո՛ւր, — ձայնեցին մյուսները, ու այսպես բերնե-բերան անցնելով, տարածվեց, ժողովրդականացավ այդ անունը և ապրեց մինչև մեր օրերը»:

Մի պահ քար լռությունը ձուլվեց խավարի հետ ու ծանրացավ Ոհան ապոր ունկնդիրների սրտին: Ընդհանուր տրամադրության թարգման յեղավ Մաքոն.

— Ոհա՛ն ապեր, մեր սիրտը վառեցիր քո ավանդությամբ, — ձայնեց նա հուզումնալից, ներս քաշելով թամբաքու դառը ծուխը:

Նրան վորպես արձագանք, ղարբնի մուրճի տա-
կից թռած կայծերի պես, ծկլթացին կցկտուր բացա-
կանչություններ.

— Խե՛ղճ Շողիկ...

— Խե՛ղճ ասիր ու Թողիր...

— Ի՛նչ տխուր պատմություն...

— Այո՛, տխուր պատմություն է, — խոսեց նո-
րից Ոհան ապերը: — Այն օրից անցել են դարեր:
Քանի՛-քանի՛ սերունդներ հաջորդել են իրար, սիրել,
ատել են, պայքարել ու հող են դարձել այս ուռինե-
րի փտած տերևների պես: Բայց Կաթնաղբյուրը կա,
և նրա մասին ժողովրդի հյուսած ավանդությունը
դեռ այսօր էլ հուզում է մեր սիրտը խեղճ Շողիկների
վողբալի վախճանով, վրդովում է մեզ դաժան Սալար-
ների անօրեն վարք ու կարգերով...

Թոքերի խորքից հորդած հազը խեղդեց Ոհան ա-
պոր ձայնը, կտրեց նրա խոսքի թելը: Հազը հաղթա-
հարելուց ու փոքր դադար առնելուց հետո նա շարու-
նակեց.

— Հնուց յեկած այս ավանդությունը մեզ համար
պատմական դաս է, վորից պետք է հանել վորոշ յեզ-
րակացություններ... Ե՛հ, հոգնած մարմինը կարոտ է
հանգստի — քնի, և Արփա-չայը օրոր է ասում մեզ:
Բարի գիշեր:

— Անո՛ւշ քուն...

— Քա՛ղցր յերազ քեզ, Ոհան ապեր...

Ոհանը գլուխը դրեց իրենից անբաժան իր կաշվե
պայուսակին, վերարկուն քաշեց ուսերին և շուռ
յեկավ աջ կողքին ու լռեց:

Լուռ էին նաև նրան լսողները, լուռ և մտա-
ծույզ: «Պատմական դասը» խռովել էր կոլխոզնիկնե-
րի ուղեղը, ակամա համեմատելով ներկան անցյալի
հետ, յերբ նրանց նման մարդը արուն-արցունքով էր
թացում իր կերած չոր հացը, յերբ նա տեր չէր վո՛չ
միայն իր հալալ աշխատանքին, այլև իր չարքաշ կյան-



քին: Սև յերեկվա հանդեպ պայծառ այսօրը լցնում
էր նրանց հոգին հրճվանքի զգացումով, և քունն իր
նուրբ թևերով հետզհետե կամացուկ շոյում էր նրանց
աչքերը:

Ծղրիդների գիշերային միօրինակ ճռռոցին
շուտով միացավ Կաթնաղբյուրի շուրջը խաղաղ և ան-
վրդով քնած աշխատավորների համաչափ մշմշոցը:

Г. 1986
№ 50

36Է 365
Арм.
2-30992

ԳԻՆԸ
50
ԿՈՊ.

С 31

АНТУНИ

**КАТНАХБЮР**

(На армянском языке)

ИЗД. ГАЗ. „ПРОЛЕТАР“

30

ՀՀ Ազգային գրադարան
NL0322780

Арм.
2-30992